

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՐԳԻՇԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1906-1915)

Ս.Ս. ՆԱՉԱՐԱՆ

1905-1907թթ. ռուսական բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխության տարիներին հասարակական, քաղաքական բարդ իրադարձությունների շրջապատույտում հայ ժողովրդի հոգևոր կյանքում նոր աշխուժություն է սկսվում: Մշակույթի այլևայլ ձևերի հետ աննախադեպ զարգացում է ապրում հայ մամուլը, որի անդամատանում երևան են գալիս երգիծական պարբերականներ:

Արևելահայ երգիծական մամուլը իր ազդեցության շառավիղներով թափանցում է սոցիալական, տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքի ոլորտները դառնալով գրպանում տեղ գտած հակասությունների ու անարդարությունների մերկացման, խարազանման սուր և ազդու միջոցներից մեկը: Երգիծական մամուլի ներգործուն դերի մասին ժամանակին նշանավոր հրապարակախոս, երգիծաբան Հարություն Սվաճյանը գրել է. «...քաղաքակիրթ ազգերը հատկապես ժողովրդյան և տերության վարմանց պակասությունները ծաղրելու համար լրագիրներ ունեն և այն ազգերը անանկ համոզված են և իրավամբ, թե այն լրագրերու մեկ թերթը բարոյականի դասատու փիլիսոփայի մը մեկ հատոր գրքեն ավելի ազդեցություն և արդյունք ունի»¹:

Հայերեն առաջին ծաղրաբանական և բանասիրական շաբաթաթերթը «Զվարճախոսը» լույս է տեսել Կ. Պոլսում, 1855-1856թթ.: Այնուհետև, դարձյալ Կ. Պոլսում հաջորդաբար հրատարակվել են «Մեղու» (1856-1874), «Մամուլ» (1869-1882), «Փող առավոտյան» (1870), «Շառիվառի» (1870), մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Թատրոն» (1874 - 1877), «Խիկար» (1884-1888) և այլ երգիծական պարբերականները: Այդ նույն տարիներին Անդրկովկասում հայերեն առանձին երգիծական պարբերականներ լույս էին տեսել: Կարելի է նշել միայն «Երևանի հայտարարություններ» երգիծական երկօրյա թերթը (1883-1885), որի էջերում մեծ տեղ է հատկացվել կենցաղային թեմաներով գրված ծիծաղաշարժ պատմություններին, անեկդոտներին:

1905թ. սկսած արևելահայ իրականությունում հրապարակախոսության ասպարեզ դուրս եկած առաջադեմ մտավորականները (գրողներ, դրամատուրգներ, նկարիչներ և ուրիշներ), գործի դնելով երգիծելու իրենց շնորհքն ու տաղանդը, մեկը մյուսի ետևից լույս աշխարհ են հանել երգիծական պատկերազարդ պարբերականներ («Մոծակ», «Զուռնա», «Խաթաբալա», «Հայելի», «Աննամուս», «Սպիրիչ», «Մախլաս», «Կազ դե» և այլն): Ցավոք, դրանք, բացառությամբ «Խաթաբալայի», լրիվ համարներով չեն պահպանվել: Այսպես, Թիֆլիսում լույս տեսած «Մոծակ» երգիծազավեշտական շաբաթաթերթի միայն մեկ համարն է (1907, №1) մեզ հաջողվել գտնել: Մինչդեռ, շաբաթաթերթը 1907թ. թևակոխել է իր հրատարակման 25-րդ տարին, ինչպես վկայում են ենթավերնագրի տակ տպագրված հետևյալ տողերը. «25-րդ տարեշրջան»: Ենելով սրանից՝ կարելի է ենթադրել, որ «Մոծակը»

¹ Մեղու, 1857, № 13, էջ 293:

լույս է տեսել 1882 թվականից: Այն փաստի մասին, որ շաբաթաթերթը հրատարակվել է անցած դարի վերջին, վկայում են նաև հետևյալ տողերը. «Մեր ընթերցողները, «Մոծակի» աշխատակիցների շարքում չհանդիպելով «Մոծակի» նախկին խմբագիր «Նալբանդ-Մուկուչին», անշուշտ, կցանկանային իմանալ պատճառը: Այդ 1895թ. Սասունի կոտորածից ու 61-րդ հոդվածի հանդիսավոր թաղումից հետո պատահեց: Հինգ տարի մազերը քանդելուց հետո, երբ 1900-ին խմբագիրը սկսեց ծիծաղել, նորից սկսվեցին բաները փոխվել»:

«Մոծակ» երգիծական շաբաթաթերթը լույս է տեսել երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, վրացերեն): Խմբագիր-հրատարակիչներն են եղել Վ.Դավիդյանցը (փաստորեն՝ Գ.Երիցյանը), ապա՝ Հ.Խոջամիրը: Պարբերականի հիմնական նպատակը եղել է՝ երգիծանքի բազմազան միջոցներով ներազդել ժողովրդական լայն զանգվածների վրա, համախմբել նրանց ուժերը երկրի դեմոկրատացման համար ծավալված համաժողովրդական պայքարի շուրջ: Շաբաթաթերթի 1907թ. առաջին համարում տպագրված հեռագրերից մեկում պարզեպարզ գրված է. «Հանաքչի երիտասարդների խմբագրությանը լույս տեսավ ռուսերեն, հայերեն և վրացերեն տղոց և կծոց «Մոծակի» առաջին համարը, ուր երեք լեզուներով հայտարարվում է, թե ազատությանը Ռուսիայում անձեռնմխելի է, այսինքն, ուժի ազատության ձեռք տալ չի կարելի, իսկ ուրիշի ունեցածը գողանալ, հափշտակել-փախչել, մինչև իսկ սպանել կարելի է»:

Շաբաթաթերթի բաժիններն ունեն յուրօրինակ վերնագրեր՝ «Մասլա-հաթաբանություն», «Հարստանալու գեղարվեստը», «Բարեգործական դիմակի տակ», «Հաց և կոծ», «Փոստ և բաց նամակներ», «Մտքեր» և այլն: Նյութերը ստորագրված են երգիծաթերթի անվանը հարող ծածկանուններով (Մեեդ, Մոծակ, Սարդ, Բոռ, Կարիճ, Մեղրաճանճ և այլն):

«Մոծակ» երգիծական պարբերականի երգիծանքը ունի և՛ քաղաքական, և՛ սոցիալական ուղղվածություն: Այստեղ ծաղրածանակի են ենթարկվում քաղաքական, հասարակական կարգերը, իշխանավորները, կաշառակեր դատավորները, աշխատավոր գյուղացուն ու բանվորին թալանողներն ու վիրավորողները:

Ռուսական բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխության տարիներին սոցիալական երգիծանքով և քաղաքական սարկազմով աչքի է ընկել «Հայելի» շաբաթաթերթը: Գեղարվեստական-երգիծական այս պարբերականը լույս է տեսել Թիֆլիսում, 1906-1907թթ.: Անվանական խմբագիրը եղել է Վ.Պետրոսյանը, հրատարակիչը՝ Բ.Ճեպեյանը: Այն փաստորեն խմբագրել է դրամատուրգ Փառնակեսը (Մակար Տեր-Սարգսյան)²: Մակար Տեր-Սարգսյանը ծնվել է 1850թ.: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Գրել է մոտ 20 ողբիլ և կատակերգություն: Շաբաթաթերթին աշխատակցել են Ս.Սաֆարյանը (Լիլիպուտի), Հ.Պետրոսյանը, Շ.Կուրդիսյանը, Ե.Թոլայանը, Ա.Պայազատը և ուրիշներ: Գոմարվոր պատկերների հեղինակներ են նկարիչներ Շամշինյանը, Զոմմերը, Ճեպեյանը և ուրիշներ:

² Պետք է նշել նաև, որ, նախքան «Մոծակի» լույս տեսնելը 1880-1881թթ., Թիֆլիսում ռուս բանաստեղծ, թարգմանիչ, առաջադեմ մտավորական Ի.Ֆ. Տխորթևակու խմբագրությանը և բանկի կառավարիչ, հայազգի Ի. Փիթոնի նյութական օժանդակությամբ լույս է տեսել «Ֆալանգա» ռուսերեն երգիծական առաջադեմ ամսագիրը:

³ Մոծակ, 1907, №1:

⁴ Նույն տեղում:

⁵ Այդ մասին տե՛ս Հայելի, 1906, №3:

Երգիծական շաբաթաթերթը բաղկացած է ութ էջից, վերջին էջերում գետեղված են ծաղրանկարները: Հիմնական բաժիններն են. «Ֆեյհետոն», «Քրոնիկոն», «Գեղարվեստական», «Դիցաբանական», «Հեքիմարան», «Հեռագրեր», «Այլ և այլ»:⁶ Ինչպես նախորդ երգիծական պարբերականում, այնպես էլ այստեղ հոդվածները ստորագրված են ծածկանուններով (Սոժակ, Բոյաճի, Ղազազենց Պեպան, Մացառ, Գայլ Վահան և այլն):

«Հայելի» անունը ինքնին հուշում է, որ շաբաթերթը իրերը, երևույթները, մարդկանց ներկայացնելու է այնպես, ինչպես որ կան: 1906թ. թիվ 2-ի առաջ-նորոգողում նշվում է, որ Թերթի խնդիրն է լինելու ասել ճշմարտությունը, ցույց տալ Հանցավոր պաշտոնյային, պատվավոր թվացող դադափառի քարոզչին և մեղապարտ մյուս իշխանավորներին՝ իրենց «անճոռնի հոգով և կեղտոտ սրբով, զազիր, քստմանիլ գործերով»:

Համակրայից վերաբերմունք ցուցաբերելով ժողովրդական ըմբոստ ելույթների, հեղափոխական շարժումների նկատմամբ շաբաթաթերթը գտնում է, որ ազգային կուսակցությունները, շատ ու շատ դեպքերում էրբար միջև տարաձայնություններ ունենալով, խանգարում են շարժման տարածմանն ու առաջինթաց զարգացմանը: Դրա համար կոչ է անում նրանց՝ միաբանվել:

Շաբաթաթերթի երգիծանքին առավել սրույթուն է հաղորդել լեզուն: Օգտագործված են հիմնականում Թիֆլիսի, ինչպես նաև Ղարսի, Նոր Նախիջևանի, Լոռու բարբառները և արևմտահայերենը:

Առանձնակի ուշադրության են արժանի քաղաքական թեմաներով զբաղված նյութերը և վարպետ վրձնով կատարված ծաղրանկարները: Շաբաթաթերթը իր էջերում շարունակ այն միտքն է տարփողել, որ վաղ թե ուշ տառապելու է ինքնակալությունը և ճանապարհ է բացվելու աշխատավոր մարդու լուսավոր ապագայի համար: Ծաղրանկարներից մեկում պատկերված է արեգակը, որը իմաստավորում է մարդկության ապագան, իսկ նրա տակ ներկայացված է մի անդունդ, ուր նետվում են իշխանավորները: Ծաղրանկարը մակագրված է. «Խաբարդա. ...բյուրոկրատիան կործանվում է. ...խաբարդա»:⁷ Մեկ այլ «Տուր-տուր» վերնագրով հոդվածում⁸ խիստ քննադատված են հարկահանները: Նրանցից ամեն մեկն իր ձեռով է հարկը հավաքում. ոստիկանը՝ հրամայելով, դատարանի ներկայացուցիչը՝ «արջի պես գոռալով», ազգասերը՝ ատրճանակն ու դազանակը ձեռքին:

Երգիծաթերթի և՛ նյութերը, և՛ ծաղրանկարները արտահայտում են լավատեսական տրամադրություններ: Այսպես, «Երկու պատկեր, երկու աշխարհ»⁹ ծաղրանկարը այն միտքն է արտահայտում, թե ժամանակը ցույց կտա, որ աշխատավորը պետք է ինքը վայելի իր աշխատանքի ամբողջ վաստակը:

Պետական դումայի փակման ու բացման, ինչպես և հեղափոխական շարժումների հաջողությունների ու պարտությունների հետ կապված փոփոխվել են շաբաթաթերթի վերնագրերը: Երկրորդ պետական դումայի բացման օրվանից «Հայելին» անվանվում է «Խաբարդա» (1907, թիվ 12-ից), իսկ հեղափոխության

⁶ Նույն տեղում, թիվ 1:

⁷ Նույն տեղում, 1907, թիվ 13:

⁸ Նույն տեղում, թիվ 7:

⁹ Նույն տեղում, թիվ 16:

անկումից հետո պարբերականը կոչվում է «Սատանա» (1907, № 19): Ծաղրանկարում հեղափոխությունը պատկերված է սատանայի կերպարանքով:

«Հայելի» շաբաթաթերթում տպագրված՝ Շ.Կուրդինյանի, Ս.Սաֆարյանի, Հ.Պետրոսյանի, Գայլ Վահանի և մյուսների չափածո գործերում համարձակորեն քննադատվել, ծաղրուծանակի են ենթարկվել կյանքի տերերը: Ինչպես վկայում են փաստերը, գրաքննությունը ուշի-ուշով հետևել է նյութերի բովանդակությանը, անգամ մի քանի համար բռնագրավել: Մի շարք համարներ էլ լույս են տեսել ջնջված ծաղրանկարներով: Այսպես, 1907թ. № 7-ի շապկաները սև շրջագծերով ջնջված է, իսկ № 22-ի խորագրերի վրա սև գույնի մատիտով խաչ է քաշված և տակը գրված է. «Մեր «Հոպ-Հոպի» բախտը չբերեց: Առաջին երեսի նկարը ցենզուրան մկրտեց: Ընթերցողները մնացին առանց տոնական նկարի»:

1907թ. № 23-ը լույս տեսնելուց հետո «Հայելի» երգիծական շաբաթաթերթը ընդմիջտ փակվել է:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին իր կոչմանն է ծառայել 1906-1907թթ. Պետերբուրգում լույս տեսած «Սափրիչ» զավեշտական ամսագիրը, որը խմբագրել ու հրատարակել է նկարիչ, հրապարակախոս Դավիթ Օքրոյանը: Նա ծնվել է 1874թ., 1893թ. ավարտել է ծննդավայրի՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1909թ.՝ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիային կից բարձրագույն գեղարվեստական ուսումնարանը: Դ.Օքրոյանը պատկերազարդել է Թիֆլիսում, Պետերբուրգում և այլուր լույս տեսած հայերեն, ռուսերեն, վրացերեն մի շարք պարբերականներ: 1918-1921թթ. նա աշխատել է Պետերբուրգի հեղափոխության թանգարանում: 1921թ. եղել է Օգեսայի քաղաքական գեղարվեստական պլակատային արվեստանոցի վարիչը, կազմակերպել է «Գեղարվեստից ակադեմիա», եղել է ռեկտորն ու գեղանկարչության պրոֆեսորը: Դավիթ Օքրոյանը մահացել է 1943թ., Պետերբուրգում:

«Սափրիչ» գրական, հումոր-սատիրական ամսագրին աշխատակցել են երաժշտագետ Եղիշե Բաղդասարյանը, բանաստեղծներ Հարություն Թումանյանը, Միսոն Սաֆարյանը, Գևորգ Բարխուդարյանը և ուրիշներ: Հոգևածների մեծ մասը ստորագրված է ծածկանուններով (Լիլիպուտի, Եզոպոս, Էմիլ, Փարոս, Ըիպոտ և այլն):

Ամսագրի հիմնական նպատակն է եղել երգիծանքի կրակի տակ առնել ու դատապարտել իշխանության ներկայացուցիչների ստոր ու տմարդի արարքները, այն գործերը, «որոնց մարդկային առողջ լոգիկան կգտնե վնասակար, անարդարացի և կղատապարտե իր խիստ ու անաչառ քննադատությանը, արժանացնելով իր հումորին՝ իբրև հասարակական կյանքի բացասական երևույթների»¹⁰: Այսպես, դիմելով իր ընթերցողներին, նրանց հորդորում է «աշխատել սափրել այն տեսակ ցեցերին, որոնք իսկապես ամոթ, նախատինք են բերում մի ամբողջ հասարակության, որոնք տգրուկի պես ծծում, քամում են խեղճ ժողովրդին»¹¹:

«Սափրիչ» ամսագիրը պարզամտորեն մեծ հույսեր է կապում 1905թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով շնորհված «ազատությունների» հետ: Այն կարծիքն է հայտնում, թե հայ ազգը վերջապես կփրկվի նախկին բյուրոկրատական վարչակազմի վարած «ռուսացման» քաղաքականությունից:

¹⁰ Սափրիչ, 1908, № 1, էջ 2:

¹¹ Նույն տեղում, № 2, էջ 10-11:

Սակայն որոշ ժամանակ անց Հոսախաբուծություն ապրած ամսագիրը ծաղրում է ցարի տված խոստումները: Ծաղրանկարներից մեկում «ազատությունը» պատկերված է բռնակալի տեսքով, որը մի ձեռքում, դոստոևսկի, կոշիկների մեջ զենք է կրում¹²:

Ամսագիրը անդրադարձել է նաև Հայ-ադրբեջանական կռիվներին, դատապարտել երկու հարևան ազգերի միջև թշնամանք սերմանողներին: Ծաղրել է կեղծ ազգասերներին, փառասեր կուսակցական գործիչներին, Պետերբուրգում սովորող շահամուլ Հայ երիտասարդներին և ուղիղներին:

Տիրող անարդարությունների և ընդհանրապես բյուրոկրատ իշխանավորների դեմ ուղղված պայքարի կոչը առավել համարձակ ու խրոխտ է հնչում արձակ և չափածո գործերում (Հար. Թումանյանի «Ազատության զինվորներ», «Արյան երգերից», Հր. Անուշյանի «Հառաջ», «Խեղճ էր ամբոխը» և այլն): Հար. Թումանյանի չափածո գործում այդ կոչը հնչում է ոչ թե այլաբանորեն, այլ սովորական, պարզ խոսքերով.

Բավական է, ինչ կրեցինք
Անարգ լուծը դարավոր,
Եկեք կռվենք, ջնջենք խապառ
Նենգ հրեշի բռնավոր...¹³:

Երգիծանքի արտահայտչամիջոցներից օգտագործելով ինքնախարագանումը ամսագիրը «Տապանադրեր» խորագրի տակ զետեղել է վախառուններին, դիպլոմավոր քաղաքագետներին և մյուսներին բնութագրող քառյակներ: Վաղխառուն ինքն իր մասին գրում է.

Շատ տներ ես դժբախտացրի,
Խեղճ որբիկներ կողոպտեցի
Աղքատի շապիկն հանեցի,
Անչափ ոսկիներ դիզեցի¹⁴:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում և ուշադրության են արժանի ծաղրանկարները, որոնց մեծ մասի հեղինակը Դավիթ Օբերոյանն է: Ծաղրանկարների թեման բազմաբնույթ է: 1906թ. № 8-ում «Դուժայի մինիստրական լոժայում» վերնագրով ծաղրանկարները, պատկերում են Դուժայի անդամներ Կոկովցևին, Կուրոպատկինին և այլոց: Ակիմովի կերպարի տակ մակագրված է. «Օպոզիցիայի դեմ ես պարզ միջոց գիտեի-յախիցը բռնիր, բանտ քարշ տուր»: Մեկ այլ ծաղրանկար, որ պատկերում է, թե ինչպես ոստիկանը ոտքով ճզմում է գյուղացու գլուխը, մակագրված է. «Քաղցած գյուղացին առանց ձայն հանելու պարտավոր է հնազանդվելու ոստիկանության բոլոր հրամաններին»¹⁵:

«Սափրիչ» ամսագրի երգիծանքը աչքի է ընկել արտահայտչական միջոցների բազմազանությամբ, թեմաների հարստությամբ, սարկազմով: Ամսագիրը համարձակ ելույթների համար հաճախ հետապնդվել է կառավա-

¹² Նույն տողում, № 5, էջ 7:

¹³ Նույն տեղում, 1906, № 6, էջ 6:

¹⁴ Նույն տեղում, 1907, № 9-10, էջ 2:

¹⁵ Նույն տեղում, էջ 9:

րության կողմից: Խմբագիրը շատ անգամ ստիպված է եղել հոդվածներն ու նկարները բոլորովին փոխել¹⁶:

«Մախրիչը», լինելով Պետերբուրգի առաջին Հայերեն երգիծական պարբերականը, ժամանակին կարևոր դեր է խաղացել Պետերբուրգի Հայ ազգաբնակչության հոգևոր կյանքում:

Ռուսական բուրժուազեմոկրատական հեղափոխության ավարտից հինգ-վեց տարի հետո դարձյալ երևան են գալիս նորանուն երգիծական պարբերականներ: 1913թ. Սաթենիկ Լաչբարյանը Թիֆլիսում լույս է ընծայում և խմբագրում «Մախլաս» երգիծական շաբաթաթերթը: «Մախլասի» հիմնական խնդիրն է եղել գրչով և վրձնով, ինչպես 1913թ. № 1-ի առաջնորդողում գրված է, «...աչալուրջ հետևել իրականության մեջ տեղի ունեցող այն դեպքերին ու դեմքերին, որոնք ազգի ճակատին խայտառակության կնիք են դրոշմում»: Շաբաթաթերթին աշխատակցել են Գ.Սկանդար-Նովան, Գ.Բաբուրյանը, Վ.Թումանյանը և ուրիշներ:

Երգիծական պատկերազարդ շաբաթաթերթը նկատում է, որ շատ-շատերը կյանքում տեղ գտած տգեղ ու հոռի երևույթների կողքով «է՛հ, մախլաս» ասելով անտարբեր հեռանում են: Ուստի իր գործն է համարում պայքարել «է՛հ, մախլասի» արժանացող անբարոյական երևույթների դեմ, կրճատել այդ անթիվ «մախլասների» թիվը:

Ի տարբերություն նախորդ Հայ երգիծական պարբերականների, այս շաբաթաթերթի լեզուն ոչ թե Թիֆլիսի բարբառն է, այլ գրական Հայերենը:

Նյութերի մեծ մասը վերաբերում է կենցաղային թեմաներին: 1914-1915թթ. Համարները պատմում են Հայ ժողովրդի ողբերգության մասին: 1915թ. ապրիլի 5-ի ծաղրանկարում պատկերված է արեգակը, որի վրա իրենց նետերն են ուղղել թուրք զինվորները: Արեգակի տակ նկարված են ավերված տներ, խեղճացած Հայեր, գանգերի կույտեր: Նկարը մակագրված է. «Արևի խավարումը Թուրքիայում: Մի՞թե իսկապես բոլորովին խավարելու է մեր արևը»: Նկարներից մեկում դատապարտվում է Գերմանիայի Վիլհելմ II կայսրը՝ թուրքական կառավարության ոճրագործություններին Համագործակցելու Համար¹⁷:

Դաստիարակչական և ճանաչողական նշանակություն ունեն «Մտքեր և ափորիզմներ» խորագրի տակ զետեղված, նշանավոր մարդկանց ասույթներից մեջքերված նմուշները:

«Մախլասը», լինելով նաև գրական շաբաթաթերթ, մեծ տեղ է հատկացրել գրական-գեղարվեստական գործերին (ինքնուրույն և թարգմանական): Այստեղ տպագրվել են Մուպսասնի («Բորոցներ», «Թաթախման գիշեր», «Աղդանշան»), Անատոլ Ֆրանսի («Սպիտակ հովհարով կինը»), Լեսինգի («Կապիկն ու աղվեսը», «Առյուծն ու նապաստակը»), Չեխովի («Դատաստանական դեպք») և այլոց գործերը:

«Մախլասը» նույնպես երկար կյանք չունեցավ: Պատերազմական իրադարձությունները ստիպեցին ընդհատել շաբաթաթերթի լույս ընծայումը:

Դարասկզբի, արևելահայ երգիծական պարբերականների շարքում իր դեմոկրատական հստակ ուղղվածությամբ, սոցիալական երգիծանքի ու քաղաքական սատիրայի բազմազան արտահայտչամիջոցներով, խարանդ սուր ծաղրանկարներով, ինչպես և երկարակեցությամբ առանձնանում է

¹⁶ Նույն տեղում, 1906, № 5, էջ 11:

¹⁷ Մախլաս, 1915, № 2:

«Խաթաբայա» երգիծական-սատիրական շաբաթաթերթը: Լույս է տեսել Թիֆլիսում, 1906-1916, 1922, 1925, 1926թթ.: Շաբաթաթերթի խմբագիրն ու նախաձեռնողն է եղել երգիծաբան, հրապարակախոս Աստվածատուր Երիցյանը: Նա ծագումով ծղնեթցի էր: Մնվել է 1872թ.: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում, սակայն ունումը անավարտ է թողել և վերադարձել Թիֆլիս: Այստեղ հրապարակախոս, նշանավոր դեմոկրատ երգիծաբան Աշոտ Աթանասյանի ընկերակցությամբ 1906թ. հիմնել է «Խաթաբայա» երգիծական պարբերականը¹⁸: 1909-1912թթ. Աստվածատուր Երիցյանը միաժամանակ խմբագրել և հրատարակել է «Սուրհանդակ» գրական, քաղաքական, առևտրաարդյունաբերական օրաթերթը:

Աստվածատուր Երիցյանը «Խաթաբայայում» հանդես է եկել Գասպար Կալատուղյանց, Քաղբի վուրթի Գասպար Կալատուղով, Գ.Կ., Բիո-Գրաֆ և այլ ծածկանուններով: Նրա գրչին է պատկանում առաջնորդողների մեծ մասը՝ գրված թիֆլիսահայ բարբառով: Յուրաքանչյուր առաջնորդող սրամիտ ֆելիետոն է և կարևոր արժեք է ներկայացնում Հայ երգիծաբանություն

«Խաթաբայայի» խմբագրման գործում մեծ ներդրում ունի նաև Ա.Աթանասյանը: Նա եղել է երգիծական պարբերականին զաղափարական ուղղություն տվողը, նրա շունչն ու ոգին: Հետևողական դեմոկրատիզմի դիրքերից գրված նրա բազմաթիվ ֆելիետոններում, երգիծական ակնարկներում, հրապարակախոսական հոդվածներում, մանր կատակներում, էպիգրամներում տպագրված Սալ-Սան, Ես-Հեմ, Ստորա-կենտ, Ժուռնալիստ և այլ ծածկանուններով, պախարակվում են ցարական ինքնակալական կարգերը, բարձրաստիճան պաշտոնյաները, Պետական դոմայի անդամները և այլն:

«Խաթաբայային» աշխատակցել են Մ.Արադին, (Դիոնիս, Ալի-Բաբա), Մ.Բադրատունին (Փալանդուզ Մկո), Գ.Բաչինջադյանը (Գ.Բ.Նաղդըքար Գիգու, Գ.Բաչին), Մ.Դարբինյանը (Ջընդանյան, Նետ, Լեոն), Ս.Մուքայաճյանը (Ատրպետ, Ա-պետ), Ս.Սաֆարյանը (Լիլիպուտի, Միմոն), Գ.Տեր-Մկրտչյանը (Գեո-Ղեղո), Կ.Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), Ս.Տեր-Մելիքսեղեկյանը (Ղալայի Մարգար) և ուրիշներ:

Երգիծական շաբաթաթերթի ծաղրանկարները, գրաֆիկական՝ գործերը պատրաստել են ժամանակին Հայտնի նկարիչներ Գ.Երիցյանը, Օ.Շմերլինգը, Գ.Ռոտտերը, Գ.Գրինևսկին և ուրիշներ:

«Խաթաբայան» առաջին իսկ համարից գրավել է ընթերցողի ուշադրությունը: Այն հրապուրիչ է և իր լեզվով: Այնտեղ օգտագործված են թիֆլիսահայ համով բարբառը, գեղեցիկ արևմտահայերենը, Ղարաբաղի, Լոռու, Արարատյան դաշտավայրի, Նախիջևանի, Երևանի բարբառները: Շաբաթաթերթի հանդես է հետաքրքրությունն այնքան մեծ է եղել, որ առաջին համարը (երկու հազար օրինակ) արագ սպառվելուց հետո ընթերցողների պահանջով տպագրվել է երկրորդ անգամ: Երկրորդ համարից սկսած՝ շաբաթաթերթը լույս է տեսել չորս, ապա հինգ հազար օրինակով: Իսկ 1907թ. հետո այն հրատարակվել է տասը հազար օրինակով:

¹⁸ «Խաթաբայա» երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի ամբողջական պատմության ուսումնասիրությանն է նվիրված Ս.Թ. Իշխանյանի «20-րդ դարի սկզբի Հայ քաղաքական երգիծանքը» գիրքը (Ե., 1972):

¹⁹ Նույն տեղում, էջ 28:

«Խաթաբալան» 1906-1916թթ. լույս է տեսել անընդմեջ: Համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով ստեղծված աննպաստ պայմանները խմբագրին ստիպել են 1916թ. սկզբներին № 25-ից հետո դադարեցնել պարբերականի հրատարակությունը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1922թ. վերականգնվել է պարբերականի հրատարակությունը: Այն խմբագրել է Սարգիս Խանոյանը, աշխատակցել են Աս.Երիցյանը, Գ.Բաշինջադյանը, Հ.Աղաբաբը և ուրիշներ: Պետք է նշել, որ այս անգամ չաբաթաթերթը լույս է տեսել անկանոն, ընդմիջումներով: 1922թ. հրատարակվել է ընդամենը մեկ համար, 1925թ.՝ հինգ, 1926թ.՝ երկու, ապա ընմիջոց դադարել է:

«Խաթաբալայի» ծրագրային դիրքորոշումն էր՝ այլաբանական խոսքի միջոցով աշխատավորությանը ճանաչել տալ իր իրավունքները: Շաբաթաթերթը անդրադարձել է աշխատավորությանը հուզող գրեթե բոլոր խնդիրներին: Ժամանակի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի կարևոր իրադարձությունների հանդեպ իր վերաբերմունքն արտահայտելու համար օգտագործել է երգիծանքի բազմազան միջոցներ (ֆելիետոն, երգիծական ակնարկ, երկխոսություն, երգիծական անկետա, պարոդիա-բանաստեղծություն, կատակ-բանաստեղծություն, թվաբանական խնդիրներ, հեգնանք և ծաղր պարունակող հայտարարություններ, ծաղրանկար, հանելուկ-ծաղրանկար, գրաֆիկական գործեր և այլն):

Սոցիալական թեմաներով երգիծական նյութերն ու ծաղրանկարները ամբողջովին ուղղված են ցարական ռազմաֆեոդալական ինքնակալական կարգերի դեմ: Սոցիալական չարիքի հիմնական արմատներից մեկը պարբերականը տեսնում է գյուղացիության հողազրկության մեջ և այն համարում Ռուսաստանով մեկ բռնված համաժողովրդական շարժման կարևոր դրդապատճառներից մեկը: Այս համոզմունքը չափազանց անպաճույճ խոսքերով արտահայտված է ֆելիետոններից մեկում. «Նրանք, որոնք պարապում են երկրագործությանը՝ սոված են: Սովածները Ռուսաստանում անհանգիստ են և շուտ-շուտ ապստամբում են: Եվ որովհետև 100 մարդից 90-ը երկրագործությանը է պարապում, ուստի և 100 մարդից 90-ը շուտ ապստամբում է: Ռուսաստանում ապստամբներին չեն սիրում և դրա համար էլ պատժում են, իսկ եթե նրանք շատ են դալմադալ անում, երբեմն նույնիսկ սպանում են»²⁰: Խոսքը, իհարկե, վերաբերում է հեղափոխական ուժերի հանդեպ կառավարության գործադրած ճնշումներին: Իսկ 1905թ. հեղափոխության թեժ օրերին ցարի շնորհած կարծեցյալ քաղաքական ազատությունների (Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և այլն) մասին երգիծական երկխոսություններից մեկում հեղնախառն ոճով գրված է.

- Ախ, մի կտոր հող տային ինձ...
- Լաց մի լինի, պապի, հող էլ կստանաս:
- Իսկ ե՞րբ:
- Երբ որ մեռնես»²¹:

Ազդեցության ուժով առավել զորեղ են ծաղրանկարները, գրաֆիկական գործերը: Տարվա ընթացքում գյուղացին ոգևորված աշխատում է, սակայն բերքահավաքի ժամանակ նրան չըջապատում են գյուղի տերերը՝ վախառուն,

²⁰ Խաթաբալա, 1906, № 2:

²¹ Նույն տեղում, № 27:

կուլակ-հողատերը, այլ պաշտոնյա անձինք և խլում նրա ամբողջ վաստակը: Այս մասին է պատմում Գ. Ռոտտերի «Ով է աշխատում և ով է ուտում» անչափ հաջողված նկարը²²: Հարստահարիչներից կողոպտված խեղճ գյուղացին, ձեռքը ճակատին, մտորում է: «Նրա դեմքը արտահայտում է ոչ թե հուսալքվածի տրամադրություն, այլ բողոք կեղեքիչների դեմ:

Սոցիալական թեմաների շուրջ արված ծաղրանկարների ամբողջ ստեղծարարում չափազանց ուժեղ հնչեղություն ունեն Օ. Շմերլինգի «Հայ գյուղացին պրեսի տակ», «Սով արքան», «Ամենուրեք», «Հարկահանությունը լարաբաղում», Գ. Ռոտտերի «Աշունը գյուղում», Գ. Գրինևսկու «Հայ գյուղացու արդի դրությունը» և այլ ծաղրանկարներ, որոնցում ժողովրդին կոչ է արվում չվհատվել, այլ զինվել համբերությամբ և պատրաստվել մեծ պայքարի համար:

Պակաս ազդեցիկ չեն նաև ցարական բարձրաստիճան պաշտոնյաների, Պետական դոմայի պատգամավորների, ազգային բախտախնդիր գործիչների և այլոց կերպարները ներկայացնող ծաղրանկարները: Քաղաքական սրությամբ հատկապես աչքի են ընկնում ծայրահեղ ռեակցիոներ, Սինոդի ավագ դատախազ Պրեդոնոսցևին, միապետական Վիտտին, գեներալ Տրեպովին, Ստոլիպինին պատկերող ծաղրանկարները: Հեղափոխության պարտությունից հետո ստեղծված սևհարկուրակային տեռորի ու դաժան հալածանքների պայմաններում շաբաթաթերթը համարձակվել է ծաղրել, մերկացնել, դատապարտել այդ ջարդարարների գործունեությունը: «Աստղի-պալատ» պատմաճանաչողական նշանակություն ունեցող, մեծադիր ծաղրանկարում²³ պատկերված է ցարի՝ Նիկոլայ II-ի աստղազարդ պալատը, ուր սեղանի շուրջ նստած են բարձրաստիճան չինովնիկները, սեղանի տակ մարդկային գանգերի մի կույտ է, սեղանին կանգնած ճառ է արտասանում Տրեպովը: Նրա գլխավերևում Պրեդոնոսցևի չղջիկաձև կերպարանքն է: Տրեպովը իր գործակալներից պահանջում է պատժել համաժողովրդական շարժման մասնակիցներին: Առանձնապես հետաքրքիր են Պետական դոմայի գործունեությունը քննադատող ծաղրանկարներն ու ֆելիետոնները: Աշոտ Աթանասյանը Ստորակետ ծածկանունով տպագրած ֆելիետոններից մեկում գրում է. «Պետական դոման ցարական բռնակալության, բյուրոկրատիայի հրամանատարությունը նրա արքայականների՝ պատրիոտների, խուլիգանների, պոգրոմների, սլոուկացիաների խաղն է»²⁴: Պետական դոման քաղաքական մի անզոր և թույլ մարմին է, որը ընդունակ չէ լուծելու ժողովրդին հուզող և ոչ մի խնդիր, այն «կրկեսային ներկայացում և կատարյալ զավեշտ է»²⁵: Հատկապես սպանիչ ծաղրի է ենթարկվել նախարարների խորհրդի նախագահ Պ. Մտոլիպինը: Օ. Շմերլինգի հանելուկ-ծաղրանկարներից մեկում՝ պատկերված են սուլթանը և նրա առջև հեղ պարող հարճը: Քննախույզ աչքը կարող է նկատել, որ սուլթանի կերպարանքով ներկայացված է Ստոլիպինը, իսկ հարճի՝ Երրորդ պետական դոման:

Երգիծական շաբաթաթերթը անդրադարձել է հեղափոխական տարիների հետ կապված բոլոր հասարակական, քաղաքական իրադարձություններին (ազգամիջյան կռիվներ, ներկուսակցական պայքար, գործադուլներ, հեղափոխական ելույթներ և այլն):

²² Նույն տեղում, 1906, № 15:

²³ Նույն տեղում, № 3:

²⁴ Նույն տեղում, 1906, № 4:

²⁵ Նույն տեղում, 1908, № 2:

Հեղափոխության արյունահեղ օրերին «Խաթաբալան» Հանդես է եկել ժողովուրդների բարեկամության ջատագույն դերում և, օգտագործելով երգիծանքի ազդու միջոցները, փորձել է օգնել կանխելու Հարևան ազգերի միջև ծագած կռիվները և ցույց տալ, թե ում կողմից և ինչի Համար են Հրահրվել դրանք:

«Խաթաբալան» քննարկման նյութ է դարձրել նաև գրողների, Հրապարակախոսների, Հասարակական գործիչների գործունեությունը: Բարձր է գնահատել Գրիգոր Արծրունուն և նրա «Մշակը», քննադատական խոսք է ասել այն Հրապարակախոսների Հասցեին, որոնք Հաճախակի փոխել են իրենց դադափարական սկզբունքները, կարծիքները:

Ուշագրավ են Հատկապես ընկերական շարժերը՝ նվիրված գրողներին, ընդհանրապես մշակույթի գործիչներին («Մեր բանաստեղծները», «Այսօր այստեղ՝ Թիֆլիսում, վաղը այնտեղ՝ Բաքվում, ալե Հոպ» և այլն):

Շաքաթաթերթը այն եզակի պարբերականներից էր, որ առաջին Համալսարանային պատերազմի տարիներին շարունակեց լույս տեսնել և քաղաքական անաչառ դիրքերից Համարձակ խարազանել արևմտամիլոպական երկրների, Հատկապես Գերմանիայի դիվանագիտական խաղերը՝ ի մնաս Հայ ժողովուրդի: 1915թ. Համարները լի են երիտթուրքերի կառավարության ոճրագործությունները պատկերող նկարներով: Այսպես, ծաղրանկարներից մեկում թուրք զինվորը, Հայի կոկորդից բռնած, նրան ստիպում է դավանափոխ լինել, իսկ զինվորի կողքին կանգնած Վիլհելմ II կայսրը Համոզում է Հային. «Գոնե առերես ընդունեք մահամեղակությունը, մուսուլմանների սիրտը շահեք, և պատերազմում նրանք մեզ դաշնակից կլինեն»: Շաքաթաթերթը բացերբաց ասում էր ճշմարտությունը: Անգամ պատերազմի օրհասական օրերին, կարևոր դեր տալով ծիծաղին, գրում է. «...օտարոտի էր շատերին ծիծաղել այնտեղ, որտեղ արցունք էր պահանջում էտիկան..., բայց էտիկաները չքացան... և այսօր էլ «Խաթաբալան» նույն եռանդով ու կայտառով շարունակում է Հեգնել արյունարբու բռնակալների գործն ու արարքը, ինչպես և փառատենչ գործիչների սխրագործությունը: Արցունքի, վայնասունի, փորձության ժամին ևս առավել պետք է անկաշառ բարեկամը և այդ բարեկամը, մտերիմ ընկերը Հայ Հասարակության Համար «Խաթաբալան» է, որ չէ ասում այն «ճշմարտությունը», թե սեր սպիտակ է, խեղճ խելոք է..., այլ ասում է՝ խեղճ և սեր սև...»²⁶:

Շաքաթաթերթը մեծ Հարգանքով ու Հավատով է խոսում ուս ժողովուրդի ու նրա Հերոս զավակների մասին, որոնք ճակատագրական օրերին օգնության ձեռք են մեկնում. քնավեր դարձած Հայ ժողովուրդին ու նրա որբուկներին: Այսպես, 1915թ. № 7-ի ծաղրանկարը, ուր պատկերված է ուս զինվորի ուղեկցությամբ դեպի Ռուսաստան դադթող Հայ փախստականների մի խումբ, մակագրված է. «Հայ փախստականներին սրտագին կարեկցություն էին տալիս ուսական զորքի զինվորները, որոնք իրենց սայլերը, ձիերը, Հացը և այլն, տալիս էին փախստականներին և օգնում սայլերի առաջ շարժվելուն»:

Բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսության գանձերի դաստիարակչական դերն ու նշանակությունը՝ շաքաթաթերթը պատերազմի թե՛

²⁶ Նույն տեղում, 1915, № 44:

²⁷ Նույն տեղում, № 1:

օրերին իր էջերում մեծ տեղ է հատկացնում ժողովրդական երգերին, հատկապես հայրենասիրական ու ազատաշունչ ոգով գրված գործերին²⁸ :

Երգիծական շաբաթաթերթի էջերը զարդարում են ինչպես գույն, այնպես էլ հայ բանաստեղծների ստեղծագործությունները տպագրված ոտանոցներ (Վ.Բրյուսովի «Հայերին», ԲաժՖու «Ձայն տուր, ով ծովակ», Ալ.Մատուկյանի «Երգը», Հ.Հովհաննիսյանի «Արաղն եկավ» և այլ բանաստեղծություններ) :

«Խաթաբալան» մոտ երկու տասնամյակ եղել է Անգլիկական, հատկապես Թիֆլիսի հայ ազգաբնակչության բոլոր խավերի ամենամատչելի և ամենասիրելի հրատարակությունը: Այն կարդացել են բանվորն ու դպրուհին, ծառայողն ու ուսանողը, աշակերտն ու ուսուցիչը, արհեստավորն ու գործատերը:

«Խաթաբալան» և XX-րդ սկզբին լույս տեսած հայ առաջադեմ երգիծական պարբերականները զարգացման որոշակի աստիճանի վրա գրեցին երգիծական հրապարակախոսությունն ու գրականությունը: Որպես ազնիվ ու համարձակ խոսքի պրոպագանդիստներ, այդ պարբերականները երգիծանքին հաղորդեցին հասարակական, քաղաքական առաջադեմ ուղղվածություն՝ գաղափարով արևելահայ երգիծական դեմոկրատական մամուլի սկզբնավորողներն ու փայլուն ներկայացուցիչները:

ИЗ ИСТОРИИ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ САТИРИЧЕСКОЙ ПЕЧАТИ (1906-1915)

С. С. НАЗАРЯН

Р е з ю м е

В годы первой русской буржуазно-демократической революции (1905 – 1907) восточноармянская печать обогатилась сатирическими изданиями.

В Тифлисе вышли в свет сатирические еженедельники «Моцак» (1906 – 1907), «Хатабала» (1906 – 1916, 1922, 1925 – 1926), «Аели» (1906–1907), «Зурна» (1906), «Аннамус» (1907), «Махлас» (1913 – 1915), в Петербурге – сатирический журнал «Саприч» (1906–1907).

Вокруг этих периодических изданий сплотились прогрессивные публицисты, сатирики А.Ерицян, А.Атанасян, Г.Бархударян, М. Багра-тунни, известные карикатуристы Г.Башинджагян, Г.Ерицян, Г.Роттер, О. Шмерлинг и другие.

Как пропагандисты смелого и честного слова, эти издания, особенно «Хатабала», стали яркими образцами армянской демократической сатирической журналистики начала XX века.

²⁸ Տե՛ս օրինակ, նույն տեղում, 1916, № 4: